ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«22» նոյեմբերի 2020թ. № 2/1639-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՆԱՐԵԿ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասով, մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը գործող «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի թիվ 40/2020 եզրակացությունը

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության թիվ 20 (Վայոց Ձորի և Սյունիքի) բաժնի գլխավոր օպերլիազոր (ծածկագիր՝ 63ՀԾ-28.15-Գ-286) Նարեկ Սամվելի Երվանդյանի նկատմամբ կիրառել «գրավոր նկատողություն» կարգապահական պատասխանատվությունը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կ.Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X
ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ
Signed by: MASHADYAN RAFIK 3304710108

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ